Սիրիան՝ համաշխարհային խաղի կիզակետում

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 02.12.2024 թ.[1]

Իրադարձությունները Սիրիայում շատ արագ են զարգանում: Ընդամենը մեկ շաբաթում արաբական հանրապետությունում ռազմաճակատի ուրվագիծը վերադարձել է 2015–2020 թթ. պատկերին, երբ Բ. Ասադի կառավարությունը վերահսկում էր միայն Դամասկոսը, Հալեպի նահանգի մի մասը և Միջերկրական ծովի ափը: Այն ժամանակ, Իրանի Իսլամական Հանրապետությունն (ԻԻՀ) և Ռուսաստանի Դաշնության (ՌԴ) աջակցությամբ, Ասադին հաջողվեց վերականգնել վերահսկողությունը երկրի մեծ մասի վրա, ներառյալ՝ Մ5 ռազմավարական մայրուղին, որը կապում էր Սիրիայի չորս խոշոր քաղաքները՝ Դամասկոս, Հոմս, Համա, Հալեպ:

Ներկա իրադարձությունները վկայում են այն մասին, որ հենց Թեհրանի և Մոսկվայի լիարժեք աջակցության՝ «հողի վրա» բացակայելու պատճառով, ընդամենը մի քանի օրում ապստամբ բանակների և ջիհադական խմբավորումների հանրագումարի հանկարծակի հարձակումը խորտակեց կառավարության ուժերի պաշտպանությունը: Հնարավոր է, որ հակակառավարական ուժերի հարձակումը պայմանավորված էր ընդդիմության վստահությամբ, որ դաշնակիցները չեն կարողանա ապահովել անհրաժեշտ աջակցություն Բ. Ասադին: «Հեզբոլլահ»-ը, որի օգնությամբ Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ՀՊԿ) ամրապնդել էր Ասադի դիրքերը, գրեթե գլխատված և հյուծված է Լիբանանում Իսրայելի Պաշտպանության բանակի հետ մարտերում, իսկ Սիրիայում տեղակայված ռուսական ավիացիոն և այլ ստորաբաժանումների մի զգալի մասը տեղափոխվել են ուկրաինական ճակատ: Հաշվի առնելով այս հանգամանքները, «*ապստամբ բանակների*» համաժամանակյա երթը դեպի Սիրիայի խոշորագույն քաղաքները կանխատեսելի էր, և հարցն այն էր, թե երբ այս որոշումը կընդունվեր «*սիրիական ընդդիմության*» խնամակալությունը ստանձնած կենտրոնների կողմից:

Իրադարձությունների վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել սիրիական հերթական ընդվզման հիմնական շահառուներին՝ ԱՄՆ-ին, Իսրայելին և Թուրքիային, որոնց շահերը սերտորեն փոխկապակցված են Բ. Ասադի ռեժիմի վերացման և ՍԱՀ տարածքային ամբողջականության հարցերում:

Իսրայելը ձգտում է ապամոնտաժել իր հանդեպ թշնամաբար տրամադրված «*Մերձավոր Արևելքի շիա աղեղի*» նկատմամբ, որը ներառում է Իրանին դաշնակից պետական ռեժիմներ և պատվիրակված խմբավորումներ: Թուրքիան ցանկանում է վերացնել Սիրիայում Բ. Ասադին հավատարիմ քրդական կազմավորումները և ընդլայնել օկուպացիոն քաղաքականության ծավալը դրա հյուսիսում: ԱՄՆ-ի նպատակները

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 01.12.2024 թ.:

պայմանավորված են ավելի լայնամասշտաբ խնդիրներով, որոնք բխում են ՌԴ-ի նկատմամբ գլոբալ ճնշման ռազմավարությունից: Պատահական չէ, որ Սիրիայում մարտական գործողությունները ժամանակագրորեն համընկնում են ուկրաինական ճակատում իրադարձությունների կիզակետի հետ, որտեղ Կիևի համար դժվարանում է կայունացնել ճակատը, և Վրաստանում ընտրություններից հետո իրադարձությունները, որոնք կարող են վերածվել քաղաքացիական պատերազմի: Այդպիսով, Վաշինգտոնը նպատակ է դնում, առնվազն, ստիպել Մոսկվային բաժանել իր ուժերը Ուկրաինայի և Սիրիայի միջև, իսկ բարենպաստ պայմաններում՝ զրկել ՌԴ-ին իր ռազմավարական նվաճումից՝ Մերձավոր Արևելքում ռազմական-քաղաքական ներկայությունից :

Վերջին իրադարձությունները Ուկրաինայում, Վրաստանում և Սիրիայում անմիջական կապ ունեն ԱՄՆ-ի ներքաղաքական իրավիճակի հետ: Կարծես թե դեմոկրատները, իշխանությունը հանրապետականներին փոխանցելու նախօրեին, դիտավորյալ ստեղծում են պայթյունավտանգ խնդիրներ ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական ճակատի ամբողջ պարագծով: Դրանց կարելի է վերագրել Ջո Բայդենի կողմից Ուկրաինայի զինված ուժերին տրված՝ արևմտյան բալիստիկ հրթիռներով ռուսական տարածքի խորքում տեղակայված թիրախներին հարվածելու թույլտվությունը, վրացական ընդդիմության ռադիկալացումն ընտրված իշխանությունների դեմ պայքարում, և իրավիճակի ապակայունացումը Սիրիայում ռուսական խմբավորման շուրջ, որը սպառնում է բերել ռուսական ՀՈՒ անմիջական բախմանը ՆԱՏՕ-ի ուժերի հետ՝ ի դեմս Թուրքիայի: Այսպիսով, դեմոկրատները Դոնալդ Թրամփին, ով խոստացել էր կարճ ժամանակում «*մարել*» հակամարտության օջախները, առաջարկում են գլուխկոտրուկ, որը հեշտ չի լինի լուծել:

Չնայած այն փաստերին, որոնք վկայում են ԱՄՆ-ի, Իսրայելի և Թուրքիայի կապը Սիրիայի իրավիճակի հետ, վերջիններս ամեն կերպ հերքում են իրենց մասնակցությունը սիրիական վերջին իրադարձություններին: Թել Ավիվը ցույց է տալիս, որ զբաղված է բացառապես Գազայի և լիբանանյան սահմանային խնդիրներով: Անկարան, ի դեմս Հաքան Ֆիդանի, ազդակներ է տալիս, որ Թուրքիային ձեռնտու չէ ՍԱՀ-ում լայնածավալ հերթական պայթյունը, գոնե հաշվի առնելով երկիր սիրիացի նոր փախստականների հոսքի սպառնալիքը: Իր հերթին, Ջո Բայդենի վարչակազմը հայտարարել է, որ Հալեպի շրջակայքում ռազմական գործողությունների վերսկսման լուրը նրանց համար լիակատար անակնկալ էր: Եվ այս ամենը արաբական աղբյուրների այն վկայությունների ֆոնին, որ մարտերի ընթացքում սիրիական բանակի զինվորների և նրանց աջակցող ուժերի մոտ, ճիշտ Լիբանանի օրինակով, պայթել են փեյջերները, ջիհադիստների հարձակումը սկսվել է Լիբանանում հրադադարի հայտարարումից և ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Մարկ Ռյուտեի Անկարա ժամանելուց մեկ օր անց, իսկ Սիրիայում

ահաբեկչական խմբավորումների կողմից գրավված վարչական շենքերի վրա արդեն զանգվածաբար ծածանվում են թուրքական դրոշները:

Ներկայիս աղբյուրները հայտնում են, որ Թեհրանը արդեն սկսել է Սիրիա տեղափոխել հատուկ նշանակության ցամաքային ուժեր: Իր հերթին, Մոսկվան Բ. Ասադին խոստացել է ուժեղացնել իր օդատիեզերական ուժերը ՍԱՀ-ում (Խմեյմիմի բազա) նորագույն բազմագործառույթային կործանիչներով և մեծացնել տրամադրվող զինամթերքի պաշարը: Բացի այդ, Կրեմլը փոխել է Սիրիայում ռուսական խմբավորման հրամանատարին, ինչը կարող է վկայել ինչպես տեղի ունեցած իրադարձությունների լույսի ներքո վերջինիս գործունեության նկատմամբ դժգոհության, այնպես էլ՝ խստագույն միջոցների ձեռնարկման որոշման մասին:

Ակնհայտ է, որ Սիրիայի դաշնակիցները հասկանում են իրենց դիրքերի խոցելիությունը այս արաբական երկրում և ցուցաբերում են պատրաստակամություն՝ մասնակցելու Բ. Ասադի կառավարության փրկության համար պայքարին: Մյուս հարցն այն է, թե արդյո՞ք Մոսկվան և Թեհրանը պատրաստ են սերտորեն համագործակցել՝ հաջողության հասնելու հավանականությունը մեծացնելու համար:

Հետևելով զարգացող իրադարձությունների տրամաբանությանը՝ կարելի է ենթադրել, որ եթե ԱՄՆ-ին, Իսրայելին և Թուրքիային հաջողվի պահպանել իրենց գործողությունների տեմպը և չեզոքացնել ԻԻՀ-ի և ՌԴ-ի ջանքերը, ապա ՍԱՀ-ից հետո, և, հնարավոր է, դրա տրոհմանը զուգահեռ, հարվածի տակ կարող են ընկնել նաև Իրանի պատվիրակված խմբավորումները Իրաքում և Եմենում: Չի բացառվում նաև իրավիճակի ապակայունացում Իրանի հյուսիսային սահմաններում, մասնավորապես՝ Հայաստանի Սյունիքում, որի հարևանությամբ՝ Նախիջևանում, նկատվում է ադրբեջանական բանակի ուժերի և միջոցների կուտակում: Բացառվում է, որ նման ակտիվությունը տեղի ունենա բացառապես Բաքվի նախաձեռնությամբ և միայն Անկարայի համաձայնությամբ: Սիրիական ուղղությունը ցույց տվեց, որ այդ ուղղությամբ ընթացող «խաղը» խմբակային է, և այն կարող է ունենալ ավելի մեծ նպատակներ, քան գործող ռեժիմի տապալումը և այս երկրի մասնատումը: